



ԼՐԱՏՈՒ

ՀԱՅ ԱՒԵՏ. ԳՈԼԷՃԻ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 3

12 Յուլիս, 2011

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՄ՝ 12 ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՎԿԱՅՈՒԵՑԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՍՊԱՆԸ ՏՆՕՐԷՆ ԴՈԿՏ. ԶԱԲԷՆ ՄՍԸՐԼԵԱՆԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՈՍԿԵԱՅ ՇՔԱՆՇԱՆՈՎ



Շաբաթ, 25 Յունիսի, 2011, երեկոյեան ժամը 7.00-ին տեղի ունեցաւ Հ.Ա.Գ.Ի Երկրորդականի եւ Նախակրթարանի աշակերտներու վկայականաց բաշխման ամսվերջի հանդէսը: Ներկաներուն մէջ էին Մ. Ա. Հ. Ե. Ա. Միութեան Կեդր. Մարմինի ատենապետ, Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան, նախկին նախարար Սուրէն Խանամիրեան, Գեր. Հ. Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, դպրոցի սեփականատէր Հայ Աւետ. Ա. Եկեղեցիի վերին մարմիններու եւ դպրոցի հոգաբարձութեան անդամներ, հիւրեր, ծնողներ եւ բարեկամներ:



Կապուտիկեանի «Հայաստան» (Նախ. Զ.) եւ երգչախումբի երկու խմբերգ («Հիմն Հայաստանի», «Ջան Հայաստան»), խմբավարութեամբ Տիկ. Նեկտար Փալազեանի: Մրցանակաբաշխութենէն ետք, Նժդեհ Միսեսեան (հայերէն) եւ Քրիսթըլ Պապիկեան (արաբերէն) ուղերձներ կարդացին, որմէ ետք Պրն. Տնօրէնը կատարեց վկայականներու բաշխումը, իսկ տիպար աշակերտ Նժդեհ Միսեսեան իր շքանշանը ստացաւ Պատ. Հրայր Չոլաքեանէն: Ապա՝ Պրն. Տնօրէնը տուաւ իր հուսկ բանքը: Արեգ Տաղլեանի (ԺԲ. դասարան) կողմէ դաշնամուրի նուագէ մը ետք, Պատ. Չոլաքեան կատարեց շնորհակալութեան եւ փակման խօսքը եւ Օրհնութեան Աղօթքը: Ընդհատուածներէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Թափօրով հանդիսատար մուտքէն, ու Լիբանանի ու Հայաստանի քայլերգներու նուագածութենէն ետք, հոգեւոր տեսուչ Տիկ. Կարինէ Չոլաքեան Աստուածաշունչէն ընթերցեց ու աղօթեց, ապա օրուան հիւր պատգամաբեր, Հայաստանի Հանրապետութեան Լիբանանի մօտ դեսպան Ն. Վ. Աշոտ Քոչարեան խօսեցաւ կրթութեան ու Հայ Աւետ. Գոլէճի անցած ուղիին մասին: Ապա յայտնեց թէ իրեն պարտականութիւն վիճակուած է Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարար Ա. Աշոտեանի 23 Մարտի, 2011-ին, Հ.Ա.Գ.Ի տնօրէն Դոկտ. Զաւէն Մարրլեանին շնորհած նախարարութեան ոսկեայ յուշամետալը յանձնել «Կրթութեան եւ Գիտութեան ոլորտում ներդրած մեծագոյն աւանդի համար եւ ազգանուէր ու հայանպաստ գործունէութեան համար»: Ծափողջոյններու տակ Պրն. դեսպանը կատարեց շքադրումը, որմէ ետք գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիրը. ջութակի նուագ Կրէյս Մամամարպաշիի (Նախ. Դ.) կողմէ, դաշնակի ընկերակցութեամբ Պատ. Իլիաս Ժապպուրի, ասմունք՝ Ս.

ման խօսքը եւ Օրհնութեան Աղօթքը: Ընդհատուածներէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

**ՓԱՅԼՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ
ՊՐԵՎԷԻ ԵՒ ՊԱԶԱԼՈՐԻԱՅԻ
ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ**

Յունիս 2011ի պրեվէի պետական քննութեան Թ. դասարանի 4 աշակերտներն ալ յաջողեցան Արագ Տեմիրճեան (շատ լաւ յիշատակութեամբ), Մեղրի Պաղտոյեան (լաւ յիշատակութեամբ), Պերճ Յովհաննեսեան եւ Զրիսթին Շահինեան արձանագրելով 100 առ 100 յաջողութիւն: Իսկ Պաքալորիայի պետական քննութիւններուն ԺԲ. դասարանի 8 աշակերտներէն 7ը յաջողեցան Նժդեհ Միսեսեան (շատ լաւ յիշատակութեամբ), Քրիսթըլ Պապիկեան, Յակոբ Տեքրմենճեան, Համիկ Զիւրտեան, Արեգ Տաղլեան, Իման Ժապեր եւ Բաֆֆի Սավլեան, արձանագրելով 88 առ 100 յաջողութիւն:

ՉԻՆԱԹՈՅՐԸ՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՀԱՆԴԵՍԻՆ



Շաբաթ, 18 Յունիսի, 2011, երեկոյեան ժամը 6.00-ին տեղի ունեցաւ Մանկապարտեզի ամսվերջի հանդէսը Եկեղեցիի հանդիսասրահին մէջ: Նիւթը՝ Ձիւնաթոյրը եւ եօթը թգուկներն էր, ինչ որ կ'արտացոլար գեղեցկօրէն յարդարուած բեմին վրայ: Մանկապարտեզի բողբոջ, կոկոն եւ ծաղիկ դասարանի աշակերտութիւնը լրիւ ներառնուած էր հանդէսին մէջ՝ պարերով, երգերով եւ արտասանութիւններով: Ձիւնաթոյրն էր Նախ. Գ.Էն Կարին Տեմիրճեան: Մանկապարտիգպանուհի Օրդ. Յասմիկ Թորոսեանի հրաւերով Պրն. Տնօրէնը 8 աշակերտներու վկայականները յանձնեց: Ձեռնարկը աւարտեցաւ Պատ. Հրայր Չոլաքեանի խօսքով եւ Օրհնութեան Աղօթքով:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆՐԵՍ

29 Մայիսի, 2011, երեկոյեան ժամը 7.00-ին, Պրն. Տնօրէնի բացման խօսքէն եւ Ֆապրիանոյի մրցանակաբաշխութենէն ետք, դպրոցի հոգաբարձութեան ատենապետուհի Տիկ. Ռ. Արթինեան, ընկերակցութեամբ հոգաբարձութեան ատենադպիր Տիար Յ. Տեմիրճեանի եւ Պրն. Տնօ-



րէնին, բացումը կատարեց տարեկան ստեղծագործական ցուցահանդէսին: Պրն. Վազգէն Մուղալեանի աշակերտներու գծագրութիւններէն ու ձեռնային աշխատանքներէն բացի, ցուցադրուած էին գիտական project-ներ, համակարգչային, մանկապարտեզի, հայերէնի, հոգեւոր թեմայով եւ անգլերէնի աշխատանքներ, այդ նիւթերու ուսուցիչներուն հսկողութեան ներքեւ:

ԵՐԳՉԱՆՄԲԱՅԻՆ ՀԱՄԵՐԳ



29 Մայիսի երեկոյեան ժամը 8.00-ին, Ա. Եկեղեցիին մէջ դպրոցի երգչախումբը իր տարեկան ելոյթը ունեցաւ: Պրն. Տնօրէնի բացման խօսքէն ետք, Տիկ. Նեկտար Փալազեանի խմբավարութեամբ 34 անդամ ունեցող երգչախումբը մեծ մասամբ հայկական, նաեւ մեկական արաբական եւ անգլիական երգեր մեկնաբանեց: Վերի կարգերէն Կարին Հայտօսբեան, Էփի եւ Տիգի Քիրքճեան քոյրեր հանդէս եկան Բ. Կանաչեանի եւ Մայր Նովայի երգերով: Իսկ Ժ. դասարանէն Կասիա Գարակեօզեան մեներգեց «Երազ»ը: Նախակրթարան Ա.ի աշակերտներն ալ հրամցուցին մանկական երգեր: Այս բոլորին դաշնակով կ'ընկերակցէր Օրդ. Մարիա Փալազեան: Ձեռնարկը փակուեցաւ Պատ. Հ. Չոլաքեանի փակման խօսքով եւ Օրհնութեան Աղօթքով:

ՔԵՐՄԷՍ



Դպրոցի Տիկնանց Օժանդակ Ընկերային Յանձնախումբի կազմակերպած քերմէսը տեղի ունեցաւ 28 Մայիսի, 2011, առաւօտեան ժամը 11.00Էն երեկոյեան ժամը 7.00, ստեղծելով խանդավառութիւն աշակերտութեան շարքերէն ներս: Ամէն տեսակ խաղեր, համադամ ուտելիքներ, խանդավառ երաժշտութիւն ստեղծած էին քերմէսի յատուկ մթնոլորտ մը: Ձեռնարկի հասոյթը տրամադրուեցաւ դպրոցին: Նուիրատուութիւններ ըրին՝ մի ոմն՝ 500 տոլար, Պուրճ Համմուտի քաղաքապետութիւն՝ 300.000 լ.ն., Սք. Նշան Մայր Եկեղեցիի թաղականութիւն՝ 300.000 լ.ն., Տիար Սուրէն Խանամիրեան 300.000 լ.ն. եւ խումբ մը տիկիներ 188.000 լ.ն.:

Հ.Ա.Գ.-ի ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՊԱՐԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ A.U.B.-ի ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՊԱՐԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Հ.Ա.Գ.ի պարախումբը, 15 Մայիսի, 2011, երեկոյեան ժամը 6.00-ին մասնակցեցաւ Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի 37-րդ ժողովրդային Պարերու Փառատօսին: Դպրոցի խումբը, առաջնորդութեամբ պարուսույց Օրդ. Յուրի Գալայճեանի, մասնակցեցաւ ընդհանրական բոլոր



պարերուն, որոնց մէջ էին լիբանանեան, իսրուաթական, իտալական, ռուսական, ամերիկեան եւ այլ պարեր: Հ.Ա.Գ.ի խումբի անդամներն էին Կարին Աղամեան, Մէյրի Պալի, Լեւոն Պապիկեան, Անի Կերեքմէզեան, Ճեսի Թերզեան, Կասիա Գազանճեան, Գաթրինա Տումանեան եւ Զրիսթին Մամարպաշի:

Հ.Ա.Գ.-Ը ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ

27 Մայիսի, 2011-ին, Անճարի Հայ Աւետ. Երկրդ. Վարժարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի Հայ Աւետ. Վարժարաններու Մարզական Փառատօսը կազմակերպու-



թեամբ Լիբանանի Հայ Աւետ. Կրթական Համադրող Յանձնախումբին, Կրթական Խորհուրդի հովանաւորութեամբ: Հ.Ա.Գ.-ի Նախ. Դ-ԺԱ. դասարանի աշակերտները մասնակցեցան փառատօսին առաջնորդութեամբ Պրն. Տնօրէնին եւ իրենց դաստիարակ ուսուցիչներուն:

Հ.Ա.Գ. միջակ տղոց խումբը խլեց ֆուսպոլի ախոյեանութիւնը: Աթլէթիզմի մէջ Փերլա Պասէթ, Էփի Քիւրքճեան, Սառա Չիլինկիրեան եւ Կարին Հայտօսթեան մրցանակներու արժանացան: Իսկ Նախակրթարան Դ-ի աշակերտներու պարկաշարին՝ առաջին հանդիսացաւ Մամուլ Հալաճեան:

Հանդիսատար մրցանակաբաշխումէն ետք, աշակերտները Պէյրուս վերադարձան:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ Հ.Ա.Գ.-ԷՆ

- Դպրոցէն ներս պատշաճ կերպով նշուեցաւ Մեծ Եղեռնի 96-ամեակը, կազմակերպուած ԺԱ. դասարանին կողմէ: Պատգամաբերն էր Տնօրէն Դոկտ. Զ. Մարրեան:

- Նախ. Դ. դասարանէն Կրէյս Սաամարպաշի Լիբանանի Ազգ. Երաժշտա-



նոցին եւ Lion's Clubի միատեղ կազմակերպած երաժշտական մրցումի մրրցանակաբաշխութեան, որ տեղի ունեցաւ 14 Մայիսի, 2011ին, Թրիփոլիի Սաֆատի կեդրոնին մէջ, ջութակահարութեան նուագի մէջ առաջին մրցանակը ստացաւ, 10էն 14 տարեկաններու դասակարգին մէջ: Բուն մրցումը տեղի ունեցած էր 7 Մայիսին, Պալամանտի Համալսարանին մէջ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

♦Հ.Ա.Գ.ը մասնակցեցաւ ԴԵԸ-ի կազմակերպած միջ-դպրոցական ընդհ. զարգացման մրցումին, որ տեղի ունեցաւ 26 Մարտի, 2011-ին, Չապէլ Մովսէսեան Կեդրոնի մէջ, երրորդ հանդիսանալով:

♦ԺԱ. դասարանի աշակերտները համալսարանական կողմնորոշման գծով, 5 Մայիսին այցելեցին Պէյրուսի Լիբանանեան Ամերիկեան Համալսարան, ընկերակցութեամբ իրենց դաստիարակին, եւ մասնակցեցան ծրագրին:

♦Հ.Ա.Գ.ը նաեւ մասնակցեցաւ Համազգայինի կազմակերպած ընթերցանութեան մրցաշարին: 17 Ապրիլին, Նախ. 2.Էն Լոռի Եունիսէս ստացաւ անգլերէնի ընթերցանութեան առաջնութեան մրցանակը:

♦Դպրոցի երգչախումբը 15 Ապրիլին մասնակցեցաւ A.U.B.-ի երգչախումբային շէքի Նասիֆ մրցանքին:

♦Լիբանանի Նահատակաց Յուշարձանին առջեւ, 6 Մայիսին, կ.ա. ժամը 11.00-ին տեղի ունեցաւ յիշատակի հանդիսութիւն մը: Պրն. Տնօրէնին գլխա-

նողն էր Ազգ. Առաջնորդարանը:

♦Նախ. Դ-2. դասարաններու 6 աշակերտներ մասնակցեցան «Պգտիկ-Սգտիկ»ի շարադրական մրցումին: Փերլա Պասէթ յիշատակութեան արժանացաւ:

♦«Վանայ Ձայն»ի «Ծիշոյ Յնչնը»ի 28 Մայիսի աւար-



տարութեամբ Ժ. եւ ԺԱ. դասարանները մասնակցեցան: Հ.Ա.Գ.ի անունով ալ ծաղկեպսակ դրուեցաւ: Ձեռնարկին Նախածե-

տակակի մրցումին, ՀԱԳի 7-րդ դասարանէն Մէյրի Պալի, իր դասակարգին մէջ միջ-դպրոցական մրցանքին Բ. հանդիսացաւ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

♦7 Ապրիլին, մանկապարտեզի աշակերտները, մանկապարտեզականուհիին առաջնորդութեամբ TSC Mega հանրախանութի այցելեցին:

♦14 Ապրիլին, Նախակրթարան Ա-2.ի աշակերտները այցելեցին Համագգայինի գիրքի ցուցահանդես-վաճառքին:

♦19 Ապրիլին, ընդառաջելով Ազգ. Առաջնորդարանի հրաւերին, 7-րդէն 12-րդ դասարաններու աշակերտները,



Պրն. Տնօրէնին եւ իրենց դաստիարակներուն առաջնորդութեամբ այցելեցին Այնթուրայի հայ որբերու շիրիմը, ծաղկեպսակ գետեղելով եւ ներկայ ըլլալով Պրն. Միսաք Բելեշեանի եւ Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի խօսքերուն եւ հոգեհանգիստին:

♦21 Ապրիլին, Պրն. Տնօրէնին առաջնորդութեամբ Պատմութեան Ակումբը այցելեց Թրիփոլի բերդը, Միւսա-



յի Նաւահանգիստը, ուրկէ Նաւով կղզիներու շրջապտոյտ ըրաւ, ճաշեց Պի. Թու.Պի. ճաշարանը, այցելեց հայոց Եկեղեցին եւ հին շուկան, կ.ե. 5:30ին Պէյրութ ըլլալով:

♦26 եւ 27 Ապրիլին, Ս. Գիրքի Ակումբը ԶԶԱԿի մէջ ունեցաւ իր երկօրեայ հաւաքը, դասախօսութեան եւ



ընկերային պահերը, առաջնորդութեամբ հոգեւոր տեսուչ Տիկ. Կարինէ Չոլաքեանին:

♦4 Մայիսին, Նախ. Ա-2.ի աշակերտներ ներկայ եղան Չաքար Բէշիշեանի «Կարկաչ» երգչախումբի ելոյթին՝ Տեր

Մելքոնեան թատերասրահին մէջ:

♦6 Մայիսին, Նախ. Ա-2.ի աշակերտներ ներկայ եղան Պրն. Վ. Մուղալեանի բեմադրած «Բէյք Ընողին քէյք չի պակսիր» երաժշտախառն թատերախաղին, Տեր Մելքոնեան թատերասրահին մէջ:

♦7 Մայիսին, Պատմութեան Ակումբը Պրն. Տնօրէնին առաջնորդութեամբ դպրոցէն ներս դիտեց The Young Victoria պատմական ֆիլմը, ապա՝ հաւաքական ճաշ ունեցաւ Պլիս փողոցի «Չաաթար Ուս Զէյթ» ճաշարանը:

♦Մանկապարտեզի աշակերտները յատուկ արտօսա-



գրով օդակայան այցելեցին 11 Մայիսին:

♦20 Մայիսին, Նախ. Ե-ԺԱ. դասարանները ներկայ եղան ՀԵԸ-Անդրանիկի պարախումբի «Յաւերժի ճամբորդ» խորագրեալ ելոյթին, Անտրէ Լահուտ Կեղրոնին մէջ:

ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՈՐՈՎԱԾԻ ԵՐԵԿՈՆ



Պէյրութի Հ.Ա.Գ.ի Շրջանաւարտից Միութեան Վարչութիւնը, 4 Յունիսի, 2011-ին, խորովածի յաջող երեկոյ մը կազմակերպեց: Չեռնարկին մտեղէնը եւ հաւեղէնը ազնուօրէն տրամադրեց շրջանաւարտ Տիար Համբարձում Թերզեան:

Չեռնարկին բացումը կատարեց Շրջանաւարտիցի ատենապետ Պրն. Արմէն Վայէճեան, ապա՝ հրաւիրեց Պատ. Հրայր Չոլաքեանը աղօթքով բանալու ձեռնարկը, եւ Պրն. Տնօրէնը՝ իր սրտի խօսքը քսելու: Հուսկ՝ օրուան հանդիսավար Օրդ. Սեւան Չէօրէքճեան վարեց ձեռնարկը: Գալորցի պարախումբը պարեր ներկայացուց, տեղի ունեցան ընկերային խաղեր, կատակախօսութիւն, հանելուկներ եւ վիճակաճգութիւն: Այս բոլորին կողքին կը հնչէր երաժշտութիւնը: Տեր եւ Տիկ. Յակոբ Չիլինկիրեան 500 տոլար, Դոկա. եւ Տիկ. Նատր եւ Լիզա Նասիֆ 100.000 լ.ն. եւ Տեր եւ Տիկ. Սկրտիչ Քինյ. եւ երեցկին Քէշիշեան (որոնք ներկայ չէին), առ ի քաջալերանք 50.000 լ.ն. նուիրեցին:

ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐԷ

- 30 Ապրիլի, 2011-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտուկի Մարզի Հերիեր գիւղին մէջ բացումը կատարուեցաւ «Գեղամ Սիսեռեան»ի անուան մարզական դահլիճին, բարերարութեամբ ՀԱԳԻ երկարամեայ նախկին աշակերտ Հրաչ Սիսեռեանի եւ իր



տիկնոջ Էլիզապեթի: Դահլիճը կը զըտնուի նախապէս կառուցուած «Ալիս Սիսեռեան»ի անուան դպրոցական համալիրին մէջ, ուր կը յաճախեն շրջանի գիւղերէն աւելի քան 100 աշակերտներ: Բացման հանդիսութեան ներկայ եղան Սիսեռեան ընտանիքի անդամները, գլխավորութեամբ Հրաչ, Պերճ եւ Արա Սիսեռեաններու: Ներկայ էին նաեւ ԼՀՀ նախագահ Բակօ Սահակեան, նախկին նախագահ Արկարի Դուկասեան, Արցախի թեմի Առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան, կրթութեան նախարարը, Շուշիի ազատագրութեան ղեկավար Չօր. Արկարի Տէր Թադէոսեան, զինուորական եւ հոգեւորական անձնակազմիները, վարժարանի աշակերտներուն եւ գիւղի բնակիչներուն կողքին: Վարժարանը եւ Նորակառոյց դահլիճը արդիական սարքերով օժտուած միակ ակադեմիական-մարզական կառոյցներն են Արցախի այդ շրջանին մէջ:

- 1971-ի շրջանաւարտ, լիբանանեան բանակէն հանգստեան կոչուած զօրավար Փանոս Մանճեան, 13 Յունիսի, 2011-ին պետական նախարար նշանակուեցաւ վարչապետ Նեժիպ Միքաթի կազմած լիբանանեան կառավարութեան մէջ:



- 15 Յունիսի, 2011-ին, Հարաւային Գալիֆորնիոյ Ազգ. Առաջնորդարանի Գալայճեան սրահին մէջ տեղի ունեցաւ 1964-ի շրջանաւարտ, լիբանանահայ բազմահմուտ մտաւորական Պա-



րոյր Աղպաշեանի 40-ամեայ հրապարակագրական եւ ազգային-հասարակական գործունեութեան Մեծարման Հանդիսութիւնը եւ գինեծօն՝ հովանաւորութեամբ Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Ձեռնարկը կազմակերպուած էր ՌԱԿ Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան եւ «Նոր Օր» շաբաթաթերթին կողմէ: Գլխավոր բանախօսն էր Դոկտ. Միլաս Գոճայեան: Գործադրուեցաւ զեղարւեստական յայտագիր ու տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

- 11 Յունիսի, 2011-ին, 1964-ի շրջանաւարտները Ֆրեզնոյի մէջ Աթօ



Սաղտճեանին բնակարանին մէջ վերահաւաք մը ունեցան Պարոյր Աղպաշեանի ԱՄՆ-Գանատա շրջապտոյտին առիթով:

- 1 Յուլիսի, 2011-ին, 1988-ի շրջանաւարտ Պատ. Հրայր Չոլաքեան Ռատ. Հրայր Չոլաքեանի հովիւի պատասխանատու պաշտօնը: Պատ. Հրայր Չոլաքեան 11 տարիներէ ի վեր Տնօրէնն էր Հայ Աւետ. Շամըլեան-Թաթիկեան Երկրորդ Վարժարանին:



- 1955-ի շրջանաւարտ՝ Հ.Ա.Գ.ի Տնօրէն Դոկտ. Չաւեն Մըրըլեանի «Հայոց Տեղասպանութենէն Առաջ եւ Ետք» գործը (280 էջ) Ապրիլ 2011-ի սկիզբը

լոյս տեսաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն, արժանացած ըլլալով Գեորգ Մելիտենցի գրական մրցանակին:

- 25 Մարտի, 2011-ին Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճի 25-ամեակի ճաշկերոյթին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս գնահատանքով արտայայտուեցաւ Հ.Ա.Գ.ի երկարամեայ նախկին աշակերտ, դպրոցի բարերարներէն եւ պատուոյ հոգաբարձու՝ Տիար Բաֆֆի Մանուկեանի մեծագումար Նուիրատուութիւններու մասին, որոնց շնորհիւ բարերարին հօրը անուընդ կրող դպրոցին մէջ կատարուած են լայնածաւալ նորոգութիւններ:

- 1965-ի եւ 1966-ի շրջանաւարտներ Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Մարալ Զիրքճեանի հովանաւորութեամբ տեղի ունեցաւ հայրենի արուեստագետ Արեւ Պետրոսեանի ցուցահանդէսին բացումը 9 Յունիսի, 2011-ին, Համազգայինի Լիւսի Թիւթիւնճեան ցուցասրահին մէջ:

- Հ.Ա.Գ.ի 1973-ի շրջանաւարտ Տիար Անդրեաս Ռուպեան, բարերարը Շուշիի Ղազանչեցոց Ս. Աստուածածին Եկեղեցիին, 11 Ապրիլի, 2011-ին Ստըպիս Աճուրդի Տան մէջ խօսեցաւ Յովհաննէս Այվազովսքիի կեանքին եւ գործին մասին: Պետք է նշել թէ Տիար Ա. Ռուպեան Այվազովսքիի գործերու մէկ հաւաքածոն ունի, եւ իր հետ բերած էր 15 կտաներ, իր խօսքը աւելի մատչելի ընելու, աւելի քան 150 ներկաներուն, որոնց մէջ էին դեսպաններ:

- 1964-ի շրջանաւարտ Տոքթ. Վադիմակ Դարբինեան Թէքէեան Մշակութային Միութեան ԱՄՆի Արեւելեան Ափի վարչական ընտրուած է:

(Շար.ը տեսնել՝ էջ 6)

ՀՐԱՉ ՍԻՍԵՐԵԱՆԻ ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՎԱՌ ԱՊԱՅՈՅՅԸ

Ի յիշատակ իր սիրեցեալ ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեաններու, բարիզարմակ երախտագէտ նախկին աշակերտ Տիար Հրաչ Սիսեռեան իր տարեկան յատկացումը՝ 15.000 տոլար դպրոցին փոխանցեց, նպաստելով անոր պիտոճեական հաստատկշրումին:

ԲԱՆՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

♦ Յապաղումով տեղեկացանք, թե՛ 1997-ի շրջանաւարտուի Տիկ. Մարիա Այնեճեան-Ուրիշեան եւ ամուսինը բախտաւորուած են առջինեկ դուստրով մը՝ Ռիթա, 25 Օգոստոսի, 2010ին:

ՊՄԱԿ

♦ Նախկին աշակերտ Պրն. Վաչէ Այվազեան, 22 Մայիսի, 2011-ին պսակադրուեցաւ Օրդ. Թամար Սեմերճեանի հետ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Անթիլիաս:

♦ 2001-ի շրջանաւարտ Պրն. Սեւան Չարիճտեան, 27 Մայիսի, 2011-ին պսակադրուեցաւ Օրդ. Տիանա Անտրեւեանի հետ, Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ, Պէյրուս:

ՄԱՀ

♦ Յ.Ա.Գ.ի նախկին հոգաբարձու, պատմաբան Դոկտ. Անդրանիկ Չելայեան (1922-2011) 12 Ապրիլի, 2011-ին մահացած է Տիբորյոթի մէջ:

♦ Յ.Ա.Գ.ի նախկին աշակերտ եւ նախկին հոգաբարձու (1973-75) Տիար Գեորգ Գարապոյաճեան (1939-2011) 20 Յունիսի, 2011-ին մահացաւ Պէյրուսի մէջ:

Շարունակուած Էջ 5-էն

- 6 Յունիսի, 2011-ին, ՀԱԳԻ նախկին աշակերտ Դոկտ. Նուպար ԱՖէյեան գլխաւոր խօսողն էր Ութըրթաունի Սբ. Յակոբ Եկեղեցիի Արանց Ակումբին, նիւթ ունենալով «Հայ Ազգին Ընդհանրութիւնը եւ Հայաստանի Չարգացումը»: Դոկտ. ԱՖէյեան «Ֆլեկչիի Վենչըրզ» ընկերութեան հիմնադիրներէն եւ ղեկավարներէն մին է, ինչպէս նաեւ դասախօս MIT-ի եւ Հարվըրտ համալսարանի Ուիս հիմնարկին մէջ:

- 1992-ի շրջանաւարտ Օրդ. Հուրի Բիւզանդեան, 16 Մայիսի, 2011-ին, հի-



ւանդապահութեան Ph. D. (դոկտորայի) տիտղոսին արժանացաւ ԱՄՆի Փենսիլվանիա Համալսարանէն: Դոկտ. Բիւզանդեան Համալսարանի Հիւանդապահութեան Դպրոցին մէջ ղեղազորութեան դասախօսուի է:

- Հայաստանի Սահմանադրական

դատարանի 15-ամեակին առիթով ընդառաջելով դատարանի նախագահի խնդրանքին, 1963-ի շրջանաւարտուի Տիկ. Շողակ Վարժապետեան-Յովհաննեսեանի ջանքերով 1 Փետրուարէն մինչեւ 1 Ապրիլի, 2011, դատարանի սրահներուն մէջ ցուցադրուեցան հայ նկարիչներու գործեր: Այս առթիւ Տիկ. Շողակ Յովհաննեսեան պարգեւատրուեցաւ մասնաւոր շնորհագիրով:

- 27 Ապրիլի, 2011-ին, 1963-ի շրջանաւարտ, ճաշագիրքերու հեղինակ Տիկ. Անահիտ Պաղտիկեան-Տօնիկեան ԼՕԽի «Արաքսի Պուլուրճեան» սրահին մէջ «Ուտելիքները Լաւապետ Պահպանելու Կերպերը» նիւթով դասախօսութիւն մը տուաւ:

- 2007-ի շրջանաւարտ Օրդ. Մարիա Փալազեան, 19 Մայիսի, 2011-ին շատ լաւ յիշատակութեամբ Ազգային Երաժշտանոցէն Պաքքալորիա ստացած է դաշնակի նուագածութեան մէջ:

- 2010-ի շրջանաւարտներ Օրդ.ներ Սիրեյ Լեպլեյճեան եւ Արին Պաղտոյեան Լիբանանեան Ամերիկեան Համալսարանի Distinction ցանկին անցած են, իսկ Օրդ. Հուրի Լեփեճեան՝ պատուոյ ցանկին:

- ՀԱԳ-ի նախկին երկարամեայ աշակերտներէն արուեստագետ մեներգիչ Վիգէն Դարբինեան, 10 Յունիսի, 2011-ին, Բարիզի ՀԲԸՄ-ի կազմակերպութեամբ ելոյթ ունեցած է Մասիսի ընկերակցութեամբ: Վիգէն Դարբինեան «Նոր Դար» երգերու CD-ին հեղինակն է:

- 1980-ի շրջանաւարտ բանաստեղծ Կաչիկ Տետեան, Գեորգ Աբելեանի «Մաքարոնի Թիլէ-Թիլէ» գիրքը ներկայացուց 16 Յունիսի, 2011-ին, «Ազգակ», «Փիւնիկ» սրահին մէջ կայացած գիրքի շնորհահանդեսին:

«ԼՐԱՏՈՒ»Ի ՖՈՆՏԻՆ

Ամ. Տոլար

Շրջանաւարտներ Տեր եւ Տիկ. Յովիկ Ներսեսեան (Աթէւք)	50
Վեր. եւ Տիկ. Պարգեւ Տարազճեան (ԱՄՆ)	100
Շրջանաւարտ Տիար Վիգէն Տեր Սարգիսեան (Հարաւային Ամրիկէ)	100

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

«Լրատու»ի նախորդ թիւի հրատարակութենէն առջին շնորհակալութեամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Ազնիւ բարերար Տիար Գեորգ Արապեանի եռամսեայ յատկացումը՝ 3000 տոլար, «Ծիածան» Մանկամտը՝ 4.500.000 լ.ն., Տիկ. Լիւսի Թիւթինճեան իր ցուցահանդէսի հասոյթէն 2000 տոլար, Տեր եւ Տիկ. Վարուժան եւ Անահիտ Ժամկոչեան (Մեռու. Արաքիա) 100 տոլար, Տիար Սարգիս Զարկոտորեան (ԱՄՆ) Տնօրէնութեան գրասենեակ այցելութեան առթիւ 300 տոլար, Տեր եւ Տիկ. Արամ եւ Ռիթա Դաւիթեան (ԱՄՆ) Տնօրէնութեան գրասենեակ այցելութեան առթիւ 200 տոլար, Տիար Անդրանիկ Այվազեան (ԱՄՆ) 300 տոլար, իր եղբոր՝ Վաչէ Այվազեանի ամուսնութեան ուրախ առիթով, Տեր եւ Տիկ. Սարգիս Թորոսեան 25.000 լ.ն. Պետրոս Փոլատեանի յիշատակին, Տիկ. Սեդա Փամպուքեան 300.000 լ.ն. ուրախ առիթով մը:

Խմբագիր՝ Տնօրէն Չաւէս Ս. Սարգիսեան

Խորհրդատուներ՝ Տեարք Ներսէ Պաղտոյեան եւ Յակոբ Տեմիրճեան
Էջադրում՝ քարտուղարուի Շողեր Աղպաշեան-Ֆայսալ

Y.M. Philibossian Armenian Evangelical College P.O.Box 3672- Beirut, Tel: 01-349816 - Fax 01-751469
E-mail: A_E_C@cyberia.net.lb